ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

27 Ապրիլ 2020, № 15

ՀՀ-ՈՒՄ ՆՈՐ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՏԱՐԱԾՄԱՄԲ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ «ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ 2019-2020 ՈՒՍՏԱՐՎԱ ԿԻՍԱՄՅԱԿԱՅԻՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ «ԳՊՄԻ-Ի ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏԻ ԱՌԿԱ/ՀԵՌԱԿԱ ԵՎ ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՒՄ» ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՇՊՀ գիտական խորհուրդը ո ր ո շ ու մ է.

Հաստատել ՀՀ-ում նոր կորոնավիրուսի տարածմամբ պայմանավորված արտակարգ դրության պայմաններում «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի 2019-2020 ուստարվա կիսամյակային քննությունների կազմակերպման հետ կապված «ԳՊՄԻ-ի բակալավրիատի առկա/հեռակա և մագիստրատուրայի կրեդիտային կրթական ծրագրերով ուսումնառության արդյունքների գնահատման և բողոքարկման ընթացակարգում» ներառված լրացուցիչ դրույթները.

1. Արտակարգ դրության իրավիճակում բակալավրի առկա/հեռակա և մագիստրատուրայի կրեդիտային կրթական ծրագրերով ուսումնառության արդյունքների գնահատումը և բողոքարկումը կատարել առցանց:
2. Բակալավրի առկա/հեռակար և մագիստրատուրայի կրեդիտային կրթական ծրագրերով ուսումնառության արդյունքների գնահատումը և ակադեմիական պարտքերի լուծարումը կատարվում է դասավանդող դասախոսի կողմից առաջարկված և ամբիոնում քննարկված ստուգման ձևով:
3. Ուսնողների ակադեմիական տվյալների բազա ստուգման արդյունքների մուտքագրումը կատարվում է դասավանդող դասախոսի էլ.փոստից ստացված ուսանողների գնահատականների վերաբերյալ տեղեկության (էլ. տեղեկագրի) տրամադրումից հետո մեկ օրվա ընթացքում:
4. Ստուգումների կրկնակի կազմակերպում իրականացվում է ուսանողի հարգելի բացակայության դեպքում՝ դեկանի ներկայացմամբ, ռեկտորատի թույլտվությամբ, եթե ներկայացվում են բացակայությունը հիմնավորող փաստաթղթեր: Այն կարելի է կազմակերպել ուսումնական գործընթացից դուրս:
5. Դասավանդող դասախոսի էլ.փոստից եկած տեղեկատվությունը համարվում է պաշտոնական և համարժեք ստորագրությամբ վավերացված փաստաթղթի:

ՇՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ԵՐ. ՍԵՐՈԲՅԱՆ